Կ. Հ. Հրատարակչ. Ընկ.

Հայ գրերի գիւտի 1500-ամ. եւ հայ տպագրութեան 400-ամեայ յոբելեանի առիթով

Լոյս տեսաւ շքեղ հրատարակութեամբ

„Մ. Հազարեանի երկերը“

I հատոր

Կենսագրական ակնարկով (Ն. Ադբալեանի), հեղինակի պատկերով, ձեռագրի օրինակով, «Հիւսիսապայլի» նկարով և նրա բոլոր աշխատութիւնների մանրամասն ցանկով։

Գինն է 1 ր. 50 կոպ.։

Դիմել՝ Թիֆլիսի և գաւառների հայ գրավաճառներին, ընկ. միւդերին, հայաբնակ վայրերի մանր վարկի ընկ. և աշխատակից անդամներին։ Պահեստը ընկ. մոտ. Тифлисъ, Абасъ-Абадская пл. № 7.

(ա.օ.) առ. 873. 2—1

ՈՂՋՈՅՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԻՆ

—

Այսօր, Փրկչական 1913 թուականի հոկտեմբերի 12-ին, մեր երանելի թարգմանիչների յիշատակութեան օրը, ի սիւռուս աշխարհի ցրված հայ ազգը տօնում է իր պատմական և քաղաքակրթական կեանքի երկու նշանաւոր կոթողների՝ Գրերի գիւտի և Տպագրութեան սկզբնաւորութեան մեծացեալ փառաւոր յօբելեանը։

1500 տարիներ են անցել այն օրից, երբ սուրբական, յունական, պարսկական գրեր գործ ածող և իր եկեղեցիներում օտար և իրան անհասկանալի լեզուներով ժամասացութիւն լսող հայ ժողովուրդը հնարաւորութիւն ստացաւ, շնորհիւ ս. Մեսրոպի գիւտի, ունենալ ազգային ինքնուրոյն և անկախ քաղաքակրթութեան, գրականութեան գործօնը՝ սեփական մայրենի այբուբենը։ Եւ այդ սքանչելի գիւտը, կատարված հայոց եկեղեցու մի վարդապետի ձեռքով, գործակցութեամբ նոյն եկեղեցու պետի՝ ս. Սահակի, առաջ բերեց յետագայում նաև մի զարգացեալ, մշակեալ, կլասիկ լեզու և մի չքնաղ կլասիկ գրականութիւն, որի ծաղկեալ դարաշրջանը կոչվեց ոսկեայ դար։

Եւ հայ ժողովրդի ստեղծագործական միտքը ստեղծեց, շնորհիւ ս. Մեսրոպի գիւտի, ոչ միայն եկեղեցական ճոխ մատենագրութիւն, այլ և աշխարհիկ, փիլիսոփայական, գիտական, բանաստեղծական, հռետորական գրականութիւն, այլ և վերածեց նոյն բարառի հռոմէական և յունական կլասիկ գրականութեան գանձերը։

400 տարիներ են անցել այն օրից, երբ մի անյայտ տպագրիչ, որին մարմնացնում ենք «Մեղապարտ Յակոբի» մէջ, հիմնեց հայկական առաջին տպարանը Վենետիկում և հայ ժողովրդին մատակից արեց Գուտտենբերգի անմահ գիւտին, որին մեծապէս պարտական են բոլոր եւրոպական ազգերը իրանց հոյակապ և մեծ քաղաքակրթութիւնը։

Ահա այսօր համայն հայ ժողովուրդը, առանձնապէս գանգատն հայաբնակ վայրերում և հաւաքապէս՝ էջմիածնում յանձին իր պատգամաւորների և ներկայացուցիչների, նախագահութեամբ պետին այն եկեղեցու, որի վարդապետները ստեղծեցին Հայկական Գիրը 1500 տարի առաջ, ինչպէս և զարգացրին Հայ Տպագրութիւնը 400 տարի առաջ, իր երախտագիտութիւնն է արտայայտում մեծ գործիչներին և երկրպագում է մեծ դաշի ամէնին, որ հանգչում է Օշականի եկեղեցու դամբարանում, Քասախ պատմական գետի ափին։

Այսօրվայ տօնը միայն եկեղեցական կամ կրօնական տօն չէ. նա ազգային ինքնագիտակցութեան, հայ ժողովրդի հոգևոր, բարոյական և մտաւոր անկախութեան, հայ մտքի ինքնուրոյնութեան տօնն է։

«Մշակը», որ մի ամբողջ տարի բարոզեց, ժողովրդականացրեց համազգային այդ մեծ տօնի գաղափարը, «Մշակը», որ մի ամբողջ տարի յամառ կռիւ և պայքար մղեց այդ գաղափարի տարածման և յաղթանակի համար, այսօր իր հրճուանքը և ուրախութիւնն է յայտնում, որ իր անդուլ ջանքերը այողութեամբ պսակվեցին և Համազգային Յօբելեանը այսօր ոչ միայն ազգովին, համաժողովրդականօրէն է տօնվում, այլ և յաւերժացվում է մի գեղեցիկ և մեծ ակտով, դպրոցական ֆոնդով, որով պէտք է պահպանվեն և զարգանան մեր ազգային, ժողովրդական դպրոցները, որտեղից միայն կարող են դուրս գալ Հայ Գիրը և Հայ Տիպը ճանաչող ու գնահատող, Հայ Լեզուն և Գրականութիւնը պահպանող ու զարգացնող սերունդներ։

Շնորհաւորում ենք հայ ժողովրդին իր այսօրվայ մեծ քաղաքակրթական և խաղաղասիրական տօնի համար։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

10 հոկտեմբերի

Հռոմ.—Ստատս-սեկրետար Կսկովցկվը գիշերն անցրեց համեմատաբար հանգիստ, քնեց 2—3 ժամ։ Առաւօտը տաքութիւնն էր 38,3, զարկերակը 96։ Հիւանդը իրան թոյլ է զգում, ախորժակ չունի։ Կարմիր քամին շարունակում է աստիճանաբար տարածվել դէմքի վրա։ Ընդհանուր դրութիւնը լաւ է, հիւանդութիւնը ընթանում է նորմալ կերպով։

—

Պետերբուրգ. — Տօքսի եպիսկոպոս Ալէքսէյը նշանակվեց Վրաստանի էկզարխ։

—

Բեռլին.—Ժամանեց գերմանական կայսրը, որին կայսրանում դիմաւորեցին արքիդուքս Ֆրանց-Ֆէրդինանդը և դքսուհի Հոհենբերգը։ Օգոստափառ անձերը մեկնեցին Կոնոպեշտ ամրոցը, ուր կայացաւ ճաշ 25 հոգու ներկայութեամբ։

—

Վիեննա.—Լրագիրների մեծ մասը գանգատվում է պետական աննպաստ ելևմտի դէմ, որ նախատեսում է կէս-միլիարդ փոխառութեան անհրաժեշ-

ԲԱԼԿԱՆԵԱՆ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

10 հոկտեմբերի

Աթէնք.—Հաշտութեան վեհաժողովի նիստում կայացաւ համաձայնութիւն շատ կէտերի նկատմամբ։

—

Սոֆիա. — Հայրենիքում մնացած Կըրք-Քիլիսէի բոլգար ազգաբնակութիւնը հալածվում է թիւրքերից, որոնք ստիպում են բոլգար քահանաներին, ուսուցիչներին և երեւելիներին ստորագրել յայտարարութիւններ, թէ շինական ազգաբնակութիւնը յօժարակամ է հեռանում հայրենիքից։

—

Սկոպլէ.—Բոմնեակները, որոնք հանդիսանում են սերբիական մանմեդականներ Նովոբազարի շրջանում, մեծ թիւով գաղթում են Թիւրքիա։

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

—

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ 60-ԲԵԼԵԱՆԸ

—

(Մեր թղթակցից)

Էջմիածին, 11 հոկտ. առ. ժ. 10-ին

Եկել են պատգամաւորներ Թիֆլիսից, Բաքուից, Ալէքսանդրոպոլից, Շուշուց, Թաւրիզից, Վանից, Արմաւիրից, Մոսկվայից, Բաթումից։

Պատգամաւորները ներկայացան Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին։ Նրանց անունից ճառ արտասանեց Համբարձում Առաքելեանը։

Շնորհաւորելով եկեղեցական-ազգային ու կուլտուրական մեծ տօնը։ Վեհափառ Կաթողիկոսը շնորհակալութիւն յայտնեց և օրհնեց Հայ ժողովուրդը։

Առաքելեանը ներկայացրեց Պողոս Նուբար-փաշայի յանձնարարական նամակը*)։

Գալիս են հեռագիրներ։ Նոր պատգամաւորներ։

Եղանակը հրաշալի է, տրամադրութիւնը տօնական։

Հ. Առաքելեան

*) Այդ նամակը հրատարակում ենք «Մշակի» ներկայ համարում։ Խմբ.